

րելով տացէ նոցայ կեանս առողջարարս, առ ի Օգոստ հոգւոյ և մարմնոյ, զսպելով վարքս անձին իւրոյ, յուսալով զի տացէ կեանս յաւիտեանականս: Ո՛չ ի կամաց և ի մտաց և ի այգոց պտղէ իմմէ եթէ ոչ ի ընդհանրական և արդարապէս կառաւարութեանցն բարեպաշտ Թագաւորաց Քրիստոնէից ի վաղնջուց ժամանակէ երկայնամտութեամբ տնկեցեալ այգոց իրաւանց և արդարութեանց ծառի պտղաբերութենէ:

Ուրեմն, ճաշակեցէք և տեսէք. զի եթէ քաղցր է և առողջարար, սիրով ըստացէք զբարեգոյն ընծայն իմ. և արարէք սովորութիւն՝ ձեզ լսել, տեսանել, ճաշակել, և ապա վկայել հաստատելոյ, ի այսմ մտածութեան, զի դնելով ուխտս ձեր կալով մնացուք կատարող ըստ բանին Տեառն՝ որպէս ասաց եղիցի ձեր այոն այո և ո՛չ ո՛չ. այլ եթէ ի պատճառէ մեղաց և ի տարաբախտութենէ ժամանակին, և կամ ի ռամկութենէ ուսմանց, գեղեցիկ ընծայն իմ տգեղ երեւեսցի ի ակն ձեր և խօսք իմ ծանր ի ունկս ձեր, ուրեմն նս պաղատեմ առ նախահայր մեր, և սիրելին յԱստուծոյ Նոյի որդոց նորա յատկապէս ջոշ Պապին իմոյ Յաբեթայ, և Հայկա և ի սերնդոց նոցա Արամայ, Տիգրանայ, և առաջին հաւատացեալն փրկչին մերոյ Ապկար արշամայ և այն, զի նոքայ որպէս ժառանգորդ գոլով յաշխարհին Արարատեան, նոքա բարեխօս լինիցին առ տէր և Արարիչն մեր զի տացէ Շրնորհ հոգւոյ մերոյ և դարձուցէ ինքնական սիրտս ձեր առ ի կամս խորհրդիւ և հաճեցուցէ սիրտս